„ՄՇԱԿԻ" ՅՈԲԵԼԵԱՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

№ 10

(ՅԱՒԵԼՈՒԱԾ „ՄՇԱԿԻ" № 107-ի)

ՈԳՈՒ ԻՆՔՆԱՄԵԾԱՐՈՒՄԸ

I

«Ի՞նչ է մարդուն մեծ դարձնում»,—հարցրել էր Ֆերդինանդ Լասսալը իր հռչակաւոր ճառի մէջ, արտասանած Ֆիխտէի յօբելեանի կատարման միջոցին: Լասսալը այսպէս է պատասխանել իր հարցին. «Երբ անհատը, որպէս ֆօկուս, կարողանում է կենտրօնացնել իր մէջ այն ազգի ոգին, որին ինքն է պատկանում, և այդ խտացումով նպաստում է ազգային ոգու աւելի պարզ արտայայտմանը և յետագայ զարգացմանը, այն ժամանակ այդ անհատը մեծ մարդ է: Ազգային ոգին, մարմնացած՝ այդ անհատի մէջ, յստակօրէն դրսևորում է իր բովանդակութիւնը, արտայայտվելով մեծ անհատի գործունէութեամբ: Ազգը այլ կերպ չէ կարող տօնել իր մեծ գործողներին, բացի ի դէմս այդ անհատների, փառաբանել ինքն իրան, ազգային հանճարը, նրա տեսանելի մարմնացումը՝ ինքնամեծարումը. այդպիսով իւրաքանչիւր մեծ մարդկանց մեծարումը մեծ կամ փոքր չափերով՝ ինքնագովութիւն է և ազգային ոգու, և ապացոյց՝ նրա կենսունակութեան»:

Ֆ. Լասսալը այս ասել է անհատների վերաբերմամբ. նոյնը աւելի խորին համոզմունքով կարելի է կրկնել այնպիսի խմբական մեծութիւնների վերաբերմամբ, որպիսին այսօր «Մշակն» է, համադրումն մեծութիւնների: Ի՞նչ է «Մշակին» այսչափ մեծութիւն պարգևել:

Քառասուն տարվայ ընթացքում բազմաթիւ անգամ լոյս են տեսել և շարունակում են լոյս տեսնել «Մշակի» համարները. որպէս ֆօկուս («լուսահանգոյց») «Մշակի» իւրաքանչիւր թիւը տարբեր տեղերից եկող ճառագայթները ի մի է ժողովել և ցուցադրել է պայծառ հետևանքը իր խտացման ու հանգոյցի:

Գրիգոր Արծրունու մեծագոյն տաղանդով ցոլված այդ թւերը տարածվել են համասփիւռ ցրված հայ ազգի մէջ և վերադարձել ոչ իբր առանձին մի լոյսի շերտ, այլ որպէս լուսահանգոյց բազմաթիւ ճառագայթների, տարբեր տեղերից սկզբնաւորված. «Մշակի» մէջ կենտրօնացող այդ ճառագայթները եղել են ազգային ոգու մասնիկները, որոնց համադրումը և յստակ արտայայտութիւն է եղել «Մշակի» իւրաքանչիւր թիւը. և ոչ միայն սոսկ արտայայտութիւն է այստեղ. համեմատեցէք «Մշակի» մի թիւ սկզբնական տարիների և մի թիւ վերջին տարիների. մեծ է տարբերութիւնը. առաջինի մէջ գունատ է լուսահանգոյցը, քիչ են ճառագայթները և նուաղ. վերջինի մէջ փայլուն է լուսահանգոյցը, շատ են ճառագայթները և պայծառ. զարգացումը մեծ է. լուսահանգոյցի՝ ազգային ոգու մասնիկների համադրման մեծացումն ակնյայտնի է: Այդ մեծացման մէջ իր բաժինն ունի «Մշակի» իւրաքանչիւր թիւը: «Մշակը» ոչ միայն համադրումն է բազմաթիւ ույժերի և ազգային ոգու ճիշդ արտայայտութիւն, այլ և ազգային ոգու զարգացման ազդակներից մէկը: Այս է «Մշակին» մեծութիւն պարգևողը. «Մշակի» մէջ արտացոլվել են հայոց տաղանդի բոլոր ներկայացուցիչները, և իւրաքանչիւրը նրանցից իր բաժինն ունի «Մշակի» ներկայ հանդէսի մէջ, հայոց ազգային ոգու ինքնամեծարման թափօրին: Երբ Խրիմեան Հայրիկը «երկաթէ շերեփների» քարոզն էր կարդում և Գրիգոր Արծրունին նրան արձագանք էր տալիս, կամ երբ Արծրունին ազգի անհատականութիւնն էր պաշտպանում, երբ Աճարեանը զուլումի երգն էր երգում և Քալանթարը գիւղական տնտեսութեան բարուոքումն էր պահանջում—այս բոլոր դէպքերում մի Խրիմեան, մի Արծրունի, մի Աճարեան և մի Քալանթար անհատական բարի ցանկութիւններով և հայեացքներով չէին առաջնորդվում. նրանք արտայայտիչն էին հայոց ազգային ոգու, նրանք լուսահանգոյցներ էին հայկական գիւղի խրճիթներից եկող ճառագայթների, նրանք խօսնակներն էին հայոց ձգտումների. «Մշակը» քառասուն տարվայ ընթացքում արտայայտիչն է եղել այդ ձգտումների, պահանջված ժամանակ և պաշտպան է կանգնել այդ ձգտումների: 40 տարվայ ընթացքում հայոց տրամադրութեան լուսաբանութիւնն է «Մշակի» արժանիքը: Երբ ես դեռ յունվարին (№ 22) «Մշակի» մուզէումի անհրաժեշտութեան մասին գրեցի, ես ի նկատի ունէի եղած նիւթերից խելացիօրէն օգտվելը, նորերին հների հետ ծանօթացնելը, քառասուն տարվայ ընթացքում բարդված նիւթի մշակումը, և «Մշակի» գործունէութեան ընդհանուր արդիւնքների պարզ ցուցադրումը: Երևի անտեղի և անժամանակ էր այդ միտքը, ուստի և արձագանք չը գտաւ:

II

Ազգը չէ կարող տօնել ուրիշ բան, բացի իրանից. նա մեծ հանդէսներ է կազմակերպում ինքնայարգութեան կարգը կատարելու համար: Երբ տեղի են ունեցել Ալիշանի, Արծրունու, Մխիթարեանների, Աղայեանի, Պռօշեանի, Սիրմանջի, Աբէլեանի, Լէօի, Քալանթարի, Շիրվանզադէի և կ. Հ. Բ. Ընկերութեան յօբելեանները, այս բոլորն և դեռ չը յիշված շատ ուրիշ դէպքերում հայոց ազգային ոգին իր խրախճանքն է կատարել. նա հրճվել է այդ հանդէսներին: Թերևս առարկէք, թէ ամբողջ ազգը չէ մասնակցել այդ յօբելեաններին, այս կամ այն խումբը լռութիւն է պահպանել, դրա համար և ազգային չեն կարող կոչվել այդ հանդէսները: Անհիմն խօսքեր: Յիշված բոլոր յօբելեանները եղել են ազգային ոգու մեծարում և ինքնամեծարում. եթէ մի խումբ այսպէս կամ այնպէս անմիջական մասնակցութիւն չէ ունեցել հանդէսների կատարմանը, այդ ունեցել է անշուշտ իր պատճառները. մարդիկ կամ զգացել են իրանց անյարմարութիւնը ասպարէզ գալու, կամ աւելորդ են համարել այդ, տեսնելով որ շատերն են ոտի վրայ, և կամ, աւելի պարզ պատճառ, ժլատութեամբ տնտեսել են իրանց ույժերը: Այդ չէ խանգարել ազգային տօնախմբութեանը:

Այժմ «Մշակի» յօբելեանն է, ոտքի վրա են շատ կարող ույժեր, իսկ կան պարոններ, կան խմբեր, որոնք անտարբեր վերաբերմունք են ցոյց տալիս. նրանք աւելորդ են համարում իրանց՝ մէջ խառնվելը: Մայիսի 26-ին մի քանիսը իրանց սենեակներում փակված կը մնան և ներկայ չեն լինի հայոց ազգային ոգու ինքնամեծարման շքեղ հանդէսին: Նրանք իրանց ձայնը չեն միախառնի ընդհանուրի հետ և չեն երգի «Ի բիւր ձայնից բնութեան շքեղ»-ը: Պէտք է ցաւել բացականերին և ուժեղացրած յարգանքով յիշել նրանց՝ հանդէսի ժամին, միութեան աղօթքը մրմնջալիս...

Ես յիշում եմ Ալ. Քալանթարի այն ճառը, որ նա արտասանեց Թիֆլիսում, կ. Հ. Բ. Ընկերութեան դահլիճում, Թիֆլիսի Հ. Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան հանդիսաւոր նիստին, երբ Ընկերութեան փոխ նախագահ Ցար. Փիրալեանը զեկուցեց Ընկերութեան նախագահի 35-ամեայ յօբելեանի մասին: Ալ. Քալանթարը հրաժարվել էր իր յօբելեանի տօնումից և դրա առիթով մի ճառ արտասանեց: Անդադար գործունէութեան խոստումը տուեց և միութեան կոչը արեց: Նրա ճառից յետոյ ես սպասում էի, որ նրան կը պատասխանեն, կոչը կընդունեն, և Պէշիքթաշլեանի «Եղբայր եմք մեք»-ը կերգենք բոլորս միասին. բայց՝ ծափահարեցին և ցրվեցին. ես այն ժամանակ աշակերտ էի և անկարող այդպիսի միջավայրում ինձ լսեցնելու: Միութեան այդ կոչը կը կրկնվի և «Մշակի» այս մեծ յօբելեանին և աւելի ուժգին շեշտով. կը լսվեն միայն ծափեր և ներկայ եղող մի ուրիշ աշակերտ նոյն տրամադրութիւնը կապրի: Իմ նուիրական, գուցէ և երեխայական ցանկութիւններից մէկն է «Եղբայր եմք մեք»-ը հայոց ամենօրեայ աղօթք դարձնելը. եթէ այդ անհնարին է, թող գոնէ այդ աղօթքը լսվի հայոց ազգային ոգու ինքնամեծարման այնպիսի մեծ հանդէսներին, ինչպիսիք են յօբելեանները:

Այդ յօբելեանները անհրաժեշտ են հասարակական գործունէութեան արդիւնքների հաշուետուութեան համար. յօբելեանները անհրաժեշտ են նորերին անցեալների վսեմութեան ծանօթացնելու համար, անհրաժեշտ են ազգային ոգու կենսունակութեանը համոզվելու և այն ցուցնելու համար. յօբելեանները անհրաժեշտ են «մրրկաւ պատված» հարազատների միացման համար. յօբելեանները անհրաժեշտ են սեփական ույժերի պաշարը չափելու համար, անհրաժեշտ են արհեստական սահմանները նսեմացնելու և արտայայտման լայն ասպարէզ գտնելու համար. յօբելեանները անհրաժեշտ են ապագայի հեռանկարների դէմքը որոշելու և վաղվան պատրաստութիւնները տեսնելու համար:

Կեցցէ ժողովրդական ոգու ինքնամեծարման թափօրը:

Գ. Տէր-Ռուբինեան

Պետերբուրգ

ՃԱՆԱՊԱՐՀ ՏՈՒԷՔ

(«Մշակի» 40-ամեակի առիթով)

Ճանապարհ տուէք և գլուխ խոնարհեցէք. գալիս է նա...

40-ամեայ հսկայ մարտնչողն է գալիս գաղափարական դրօշակը ձեռքին...

Այո, սիրելի ընթերցող, ամսիս 26-ին, Գրիգոր Լուսաւորչի խորվիրապէն ելնելու օրը, յաղթական մարտնչող «Մշակի»՝ ռուսահայ աւագագոյն թերթի 40-ամեակն է տօնվելու... Աշխարհիս չորս կողմից, սկսած Ամերիկայից մինչև Պարսկաստանի խաւար անկիւնները, որտեղ կան հայեր, կասէք էլեկտրական հոսանքից բռնված լինեն. սկսել են խօսել և խօսքից անցել են գործի...

Լոյսն ու խաւարն այնքան ուժեղ կերպով չէին զարկվել միմեանց, որքան «Մշակ» լրագրի երևալուց յետոյ, անընդհատ, քառասուն տարվայ ընթացքում, երբ սկսեցին ցնցվել երկու ախոյեան ույժեր, ոտքի կանգնել և դէմ առ դէմ պայքար յայտարարել... Այս պայքարը ինքնագիտակցութեան, լուսաւորութեան և երախտագիտութեան մի հսկայ զանգակի ղօղանջն էր, որ այսօր հնչեցնել է աշխատում հայ ազգի գիտակից տարրը աշխարհիս չորս կողմից...

Սուտը և խաւարը փշրված նիզակով և պարտված թիկունքով փախչում են հե ի հե ճշմարտութեան և լոյսի առաջից: Նրանք այլևս անկարող են դիմադրել այն յաղթական թափով եկող 40-ամեայ անդուլ մարտնչողի առաջ, որը հարիւրաւոր սպիներով ամբողջ մարմինը զարդարած, յաղթութեան դրօշակը մի ձեռքին, իսկ խաղաղութեան արմաւենու ճիւղը միւս, ձիթենու տերևներով իր քրտնաթոր ճակատը զարդարած, ժպիտը դէմքին՝ մեզ է ողջունում... մենք էլ նրան...

Նա ժպտում և ողջունում է, չը նայելով իր ստացած վէրքերի այն լայն ծակոտիներին, որոնց ամեն մէկի մէջ մեր տգիտութեան սուրն ենք խրել բազմաթիւ անգամ և հարուած-հարուածի վրա տուել, որպէսզի մեռցնենք նրան...

Մենք ամօթահար ենք նրա առաջ, որովհետև նա հսկայ ծնունդ էր, իսկ մենք անընդունակ գնահատութեան. նա լոյսն էր, իսկ մենք կոյրերը. նա ճշմարտութիւնն էր, մենք երկչոտները... Լոյսը յաղթանակեց...

Ճանապարհ տուէք և գլուխ խոնարհեցէք. գալիս է նա...

⁂

Դու, ճշմարտութեան և լուսոյ գթառատ մայր «Մշակ», երկնեցիր և ցաւով ու տանջանքներով զաւակներ ծնար և այն տձև ու անգոյն զաւակներին փայփայեցիր, մեծացրիր և կոկելով ու կրթելով ասպարէզ բերիր ու ամեն մէկի ձեռքը տալով ինքնագիտակցութեան ջահը՝ ուրախացար, որ այլ ևս պիտի հանգիստ առնես և պարծանքով նայես այն աշխատանքի եռանդին, որ նրանց հոգում դու ներշնչեցիր...

Սակայն Աբէլի եղբայրը Կայէնն էր... Դաւաճանեցին քեզ, ուրացան այն քո մեծ երախտիքը, որ դու տուել ես նրանց. հեռացան քեզանից և փոխանակ որդիական յարգանք տածելու դէպի քեզ՝ սկսեցին բզկտել հեռուից-հեռու... Սկսեցին նախատել և ինչ ու ինչ չը վերագրել քեզ...

Սակայն դու այդ բոլորը տարար վեհանձնաբար և թէև երբեմն ապտակում էիր, սակայն չէիր ցանկանում, որ նրանց... ո՛չ, ո՛չ, մեռցնել չեմ կարող ասել, որովհետև կաթ ես տուել և քո չոր ու ցամաքած մայրական ստինքների միջից՝ կաթի տեղ արիւնովդ ես կերակրել, մինչև նրանց հասցրել ես այն հասակին...

Այսօր նրանք զրկել են իրանց՝ մասնակից լինելու այն սրբազան արարողութեան սեղանին, որտեղ ազգի գիտակից մասը պիտի պսակէ քո խոնջացած, սակայն հպարտ մայրական ճակատը...

Մոլորված որդիներին չեն մոռանայ. որովհետև դու մայր ես, նրանք որդիք...

⁂

Դուք, այսօրվայ կենդանի դրօշակիրներ, քաջարի զինուորներ, որ ուխտեցիք հաւատարիմ մնալ վեհ գործին և մինչև ձեր վերջին շունչը անդադար ու պայծառ պահել ձեր ուխտը, այսօր, նոյն անդադարութեամբ ինչպէս նախաձեռնող Արծրունին, փողփողեցնում էք ձեր գլխի վրա լուսապայծառ դրօշակը յաղթական հրամանատարի կորովի հմայքով: Կեցցէք, կեցցէք մինչև ձեր կեանքի վերջը, կեցցէք դուք, որ շատ և շատ անգամ ի սէր սրբազան գործի հալածվել, տանջվել էք և գնդակների սպառնալիքներ տեսել...

Դուք ձեր կեանքի գնով ազատել և պատրաստ հասցրել էք նրան քառասուն տարեկանի... կեցցէք:

Մկրտիչ Թայիրեան

ԻՆՉՈ՞Ի ՊԻՏԻ ՅԱՐԳԵՆՔ «ՄՇԱԿԸ»

Իբրև Թիւրքահայաստանցի՝ սրբազան պարտականութիւնս կը համարիմ իմ տկար գրչովս միացնել իմ խոնարհ յարգանքներս հայութեան պաշտպան մեծն «Մշակին» և անոր հիմնադիր անզուգական Գր. Արծրունիի յիշատակին:

Գր. Արծրունի և «Մշակ». ասոնք երկու այնպիսի անուններ են, որ, հաւատացած եմ, յաւէտ պաշտելի ու անջնջելի պիտի մնան ընդհանուր հայութեան և մանաւանդ մեր թիւրքահայութեան յիշողութեանն:

«Մշակի» յօբելեանը պարտական է յարգել ամեն մի անհատ, մանաւանդ իւրաքանչիւր թիւրքահայ և պարսկահայ, որոնց ջերմ պաշտպանը եղած է այդ լրագիրն իր ծնունդէն մինչև օրս: Ան էր, որ լուսամիտ և քաղաքակիրթ աշխարհի առաջ բացաւ մեր չարչարանքը, վաշխառուներու գործած անիրաւութիւնները, Թիւրքիոյ և Պարսկաստանի հայերու կրած անասելի թշուառութիւնները:

«Մշակ» եղած է լուսատու արևը մեր կեանքի մռայլ ու անմխիթար երկնակամարին վրայ, մեր փորձանքոտ ապագային ազդարարն ու նախազգուշացնողը, մեր դաժան ցաւերուն ամոքողն ու անյուսութեան օրերուն սրտապնդողն ու յուսադրողը:

Ցարգենք, ուրեմն, այդ կարեկից ու անկեղծ բարեկամին, այդ խոհուն ու հեռատես առաջնորդին, մեր կեանքի այդ փորձուած ու սրտոտ նաւապետին:

Հանեցէք ձեր գլխարկները, Թիւրքահայեր ու պարսկահայեր, և ակնածանքով խոնարհեցէք ձեր գլուխները բազմարդիւն ու քառասնամեայ «Մշակի» առաջ՝ մաղթելով որ մեր յետագայ սերունդները բաղդ ունենան տօնելու անոր հարիւրամեակները:

Թիւրքահայ Ռուբէն Պօյաճեան

Մարիւպօլ

Ի՞ՆՉ ԱՐԵՑ «ՄՇԱԿԸ» ՄԵԶ ՀԱՄԱՐ

«Մշակն» իր օգտաւէտ գործունէութիւնը և իդէալը, իր վեհ գաղափարների տարածումը չը սահմանափակեց միայն տեղական պայմաններում:

Կովկասի լայնածաւալ սահմաններից դուրս, Ռուսաստանի խոր ու խուլ անկիւններում ցրիւ ընկած հայ գաղութներից դուրս՝ նրա բարերար կոչը անցաւ և լսվեց արտասահմանի հայերի մէջ եւս: Եւրոպայի, Ամերիկայի զանազան անկիւններից՝ ուսանող սերունդը, վաճառական, արհեստաւոր, բանւոր դասակարգերը համակրեցին այդ կոչին, բոլորվեցին Նոր-Թերթի շուրջը:

Թիւրքիայի—Վան, Էրզրում, Պոնտոս, Մուշ, Բաղէշ, Տիգրանակերտ, Կ. Պօլիս և այլն—հայ երիտասարդութիւնը գրկաբաց և լի փափագով ընդունեց առաջադիմասէր հայկական այդ աւագ օրգանի ոգևորիչ, մղիչ և գաղափարական խմբագրական առաջնորդող յօդուածները:

Ազգային թէ հանրային, համամարդկային ինքնագիտակցութեան, զարգացման, ինքնաճանաչութեան, ինքնօգնութեան, փոխադարձ յարաբերութեան նախակոչ հրաւէրը «Մշակի» գաղափարական թելադրութիւններն էին:

Ինչ որ կամենում էր «Մշակը» Թիւրքահայերի, Թիւրքահայ մանուկների դաստիարակութեան համար, կատարվեց այնպէս, ինչպէս շատերի ցանկութիւնն էր:

«Մշակի» ամենամեծ ջանքն ու համոզումները ի զուր չանցան, որի արդիւնքը մենք տեսանք շուտով Հիգանի Ուսում., Արարատեան, Կիլիկեան Ընկ. միացումով Հայոց Միացեալ Ընկ. դրօշակի տակ: Կազմվեց մի մեծ ույժ, մի հաստատութիւն, որն այնքան մեծ համբաւ ստացաւ և Հայաստանի դաստիարակչական գործի ծանր պարտականութիւնն ստանձնելով՝ բացի տարրական դպրոցներից՝ կենտրոններում բաց արեց մի քանի «կենտրոնական վարժապետանոց»:

Որպէս աւագագոյն հայ օրգան՝ «Մշակը» յեղաշրջեց և քարացած սրտերն անգամ: Մարդասիրական լի զգացմունքով նա հրապարակ իջաւ պաշտպան հանդիսանալու զրկվածին, կարօտին, սովամահին և ամեն տառապեալներին:

Անցան 1877—78 թ. ռուս-թիւրքական պատերազմից առաջ եկած արհաւիրքն ու սարսափները, սակայն պատերազմի վերջին հետևանքն աւելի վնասաբեր եղաւ երկրի դժբաղդներին, բերեց սով իր մահաբեր վշտերով:

Եւ ո՞ւր և ո՞ւմ դիմէր Հայոց Հայրիկը. ո՞վ էր աւելի մօտիկ նրա մարդասիրական այն վեհ զգացմունքներին, եթէ ոչ «Մշակը». և Գ. Արծրունին իր օրգանով ամենաբուռն շտապողութեամբ, այդ նեղ ճգնաժամին, ցոյց տուեց իր թէ նիւթական և բարոյական օժանդակութիւնը, «Մշակի» էջերը լցրեց համոզիչ յօդուածներով, լցրեց հանգանակած գումարներով ի նպաստ Հայաստանի սովելոց՝ ազատելով բազմաթիւ սովատանջներ—հայ, ասորի, թիւրք, քիւրդ—մասնակցելով տրված օգնութիւններին. ի մի բերան օրհնում էին, գովում և փառաբանում «Մշակն» ու նրա հիմնադրին:

Դեռ թարմ են այն յիշողութիւնները, կրիտիկական այն ժամանակները, երբ դիւանագիտական շրջաններում, Սան-Ստեֆանօյի և Բերլինի վեհաժողովներում 1878 և 1879 թ. թ. Թիւրքահայոց քաղաքական հարցը հրապարակի վրա դրվեց և զբաղեցրեց եւրոպական մամուլից շատերին:

«Մշակը» հայ պարբերական թերթերից առաջինն և նախայարձակն եղաւ և աւելի թափով ու եռանդով մտաւ այդ հարցի մէջ, ծանօթացրեց քաղաքագէտներին Թիւրքահայերի թէ պատմական անցեալի, ներկայի այն տագնապալից վիճակի, քիւրդական, բաշիբօզուկական բազմադիմի հարստահարութիւնների հետ՝ գրաւելով յայտնի գրողների ուշադրութիւնը: Մի մեծ յեղաշրջում առաջ բերեց այլ և այլադաւան հայերի մէջ, սէր և համերաշխութիւն քարոզելով ամենի և բոլորի համար անխտրաբար:

Որքան խիստ էին համիդական արգելքները «Մշակի» մուտքի վերաբերմամբ Թիւրքիայում, այնքան աւելի տարածվում էին մեզ մօտ «Մշակի» թերթերը: Մենք ստանում էինք Կովկասի հայոց այդ աւետաբեր օրգանը, լինէր նա թռչունի թևերով, ընդունում էինք այն, որպէս մի նոր պատգամ Մասիսի բարձունքներից, իր նոր, թարմ գաղափարական ուղղութիւններով:

«Մշակի» կատարած դերը մեր բոլոր դասակարգային շրջաններում մեծ է. այո, մեծ է այնու, որ յետագայ խմբագրական կազմը համակրելով նրա ուղղութեան մնաց անսասան և աննկուն, անվրդով իր գործելակերպով, միշտ յարգված ու համակրված ժողովրդից: Մշակից սկսած մինչև արհեստաւորը, վաճառականը, հողագործը, պարզ գրագէտից մինչև ինտելիգենտ դասակարգը մտաւ նրա դրօշակի տակ:

Երկրի զրկված ու հալածված ժողովրդին, անխտրաբար հային, թիւրքին, ասորին և քիւրդին, նրանց տանջանքներին, վշտին մի ուժեղ և զօրավիգ բողոք, մի ցաւակից բարեկամ է հանդիսացել «Մշակը»:

Երկրի արդիւնաբերական, գիւղատնտեսական, կուլտուրայի ամեն մի ճիւղաւորութեան գործին մի մեծ ռահվիրայ, մի մեծ խորհրդատու է եղել «Մշակը» թէ անցեալում և թէ ներկայումս. մի ճշմարտութիւն, որ ինքնաբերաբար հռչակվում ու տարածվում է ամեն հայաբնակ վայրերում:

Ո՞ւմ պարտական են մեր յայտնի գրողները իրանց գրական նախօրեակը, եթէ ոչ «Մշակին», որի բովից անցնելով՝ հրապարակ իջան, օգտեցին և օգտվեցին, համբաւ ստացան ընթերցող հասարակութեան մէջ:

Այժմ, երբ հասել է ժամանակը՝ փառաւոր տօնակատարութեամբ տօնելու «Մշակի» 40-ամեակը, ամենայն ակնածութեամբ խոնարհենք այդ դրօշակի տակ:

Թող բարձր ի գլուխ ծածանվի այն դրօշակը, որն այնքան յարգված ու համակրված է ստուար համակրողների, աշխատակիցների, թղթակիցների և ընթերցող հասարակութեան մէջ:

Ողջունում ենք այդ 40-ամեակը, որպէս աւագագոյն ազատ-առաջադիմական օրգանի: Ողջունում ենք, յուսով և հաւատով սպասում, որ ապագայում ևս ընթանալու է այն փշոտ, բայց վարդաբեր ճանապարհով գնալ իր ներկայ խմբագրական կազմով, որով գնացել է 40 տարի:

Մենք յուսով ենք, որ հանրային այս մեծ տօնին պիտի մասնակցեն և Թիւրքահայ երիտասարդութիւնը և ժողովուրդը, և մանաւանդ վասպուրականցիք, որոնք յամենայն դէպս, թէ անցեալում և թէ ներկայիս, օգտվել են նրա տուած խորհուրդներից, օգտվել թէ կուլտուրայի ամեն մի խորհրդակցական նախազգուշացումներից և այլ հանգամանքներից:

Կեանք և երկարատևութիւն հայոց մեծ օրգանին և իր խմբագրական կազմին:

Որպէս հին թղթակից, երախտագէտ իմացկանութեամբ մնում եմ միշտ յարգանօք՝

Շէրենց

«ՄՇԱԿԸ» ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» բազմաթիւ ներբողների մէջ պակասում է և մի արժանիք, որ պէտք է մատնանշել. այդ՝ «Մշակի» վերաբերմունքն է դէպի գիտական և յատկապէս դէպի առողջագիտական գրուածքները: Եթէ չեմ սխալվում, ոչ մի թերթ այնպիսի սիրալիրութեամբ և այնպէս մեծ ծաւալով չէր զետեղել իր էջերում առողջապահութեան և առհասարակ գիտութեան վերաբերեալ յօդուածներ, ինչպէս «Մշակը». ուրեմն ժողովրդի մէջ լուրջ գիտական տեղեկութիւններ տարածելու տեսակէտից ևս «Մշակը» մեծ դեր է կատարել մեր կեանքում:

Գր. Արծրունին իր հայեցակէտն ունէր գիտութեան վրա և իր յատուկ ելակէտից էր գնահատում գիտութիւնը, գոնէ մեր ժողովրդի վերաբերմամբ: Թէօրետիկ գիտութիւնը նա թէ անմատչելի էր համարում հայ մասսային և թէ անօգուտ՝ ժողովրդին:

Ես լաւ յիշում եմ մի խօսակցութիւն, որ ունեցայ նրա հետ, երբ ես արտասահմանից նոր վերադարձած, ոգևորված՝ Արծրունու գործունէութիւնով, եկել էի ծառայութիւնս առաջարկելու իբրև գիտական-բժշկական բաժնի քրօնիկեօր:

«Մենք դեռ այնքան տգէտ ենք, որ նոյնիսկ թէօրետիկ գիտութիւնը մեզ համար մի լիւքս է,—ասում էր նա:—Ամեն գիտական տեղեկութիւն պիտի մի գործնական նպատակի յանգի: Ուստի մի գիտական յօդուած գրելիս, աշխատեցէք գործնականի վերածել գիտութեան տուած տեղեկութիւնները: Այլապէս ձեր գրուածքը կը մնայ իբրև մեռած տառ և ոչ մի օգուտ չի բերի ընթերցողին: Յետոյ,—շեշտում էր Արծրունին,—ժողովրդի լեզուով գրեցէք և նրա կենսական կարիքներին յարմարեցրէք գիտութեան ցուցմունքները»:

«Արձագանքը» և «Մուրճը» նոյնպէս երբեմնակի խոշոր գիտական յօդուածներ էին զետեղում, բայց «Մշակն» էր, որ իբրև ամենօրեայ թերթ և իբրև «կռւող» (միլիտան) օրգան գիտութեան տուեալները իբրև զէնք էր բանեցնում ժողովրդի տգիտութեան ու սնապաշտութիւնների մտրակելու համար և անբարեխիղճ գիտնականներին նշաւակելու համար:

Ժողովրդական առողջապահութեան վերաբերեալ յօդուածները, իբրև գործնական նշանակութիւն ունեցող գրուածքներ, առանձին սիրալիրութիւնով էին ընդունվում «Մշակի» խմբագրատանը, և Գրիգորը իր զօրեղ ու հեղինակաւոր գրչով շեշտում էր յօդուածների մէջ արծարծված գործնական խորհուրդները, աւելի ույժ էր տալիս նրանց և, այսպէս ասած, մխում էր ընթերցողի ուղեղի մէջ:

Ես բաղդ ունէի հանգուցեալ Արծրունու համակրութիւնը վայելելու։ Նա ինձ բարեխիղճ գրող էր համարում և գիտութիւնը ժողովրդականացնելու ընդունակութիւն էր գտնում իմ մէջ։ Ուստի մեծ հաճոյքով տեղ էր տալիս իմ յօդուածներին։ Մանաւանդ համաճարակների միջոցին (խոլերա և այլն) «Մշակի» էջերը լայնօրէն բացւում էին մեր յօդուածների առաջ, և երբեմն գրեթէ սիւնակների մեծ մասը բռնված էր լինում տիրող համաճարակ հիւանդութեան վերաբերեալ բանասիրականներով, առաջնորդողներով, թղթակցութիւններով, լուրերով։

Այսպէս՝ 1892 թւականի ահռելի խոլերայի ժամանակ «Մշակի» իւրաքանչիւր համարում մի քանի յօդուածներ էին լինում այդ ախտին վերաբերեալ։ Յիշում եմ, որ այդ համաճարակի միջոցին գրեթէ ամեն օր մենք տեսնւում էինք Գրիգոր Արծրունու հետ, թէ երեկոները իր մօտ և թէ խմբագրատանը։ Ինձ տալիս էր կարդալու վարակված վայրերից ստացված թղթակցութիւնները. ես կարդում էի գրածս յօդուածը. իսկ խմբագիրը այդ բոլոր նիւթերից օգտվելով իսկոյն շարադրում էր իր առաջնորդողները։ Պէտք է ասած, որ այդ բազմատեղեակ մարդը շատ թերի գաղափար ունէր մեր գիւղացիների հակաառողջական կենցաղի մասին և զարմանում էր ու սաստիկ վրդովվում, երբ լսում էր կամ թղթակցութիւններից տեղեկանում մեր ժողովրդի ծայրայեղ հակաառողջական գրութեանը։ Այդ դէպքերում նրա մէջ զարթնում էր «մարակող» հրապարակախօսը, և նրա գրիչը շանթեր էր արձակում։ Այսպէս, նոյն խոլերային համաճարակի ժամանակ, ես մի յօդուած բերեցի, որի մէջ երևանցիների ուշադրութիւնն էի դարձնում այնտեղ փողոցներով անցնող «առուների» վրա, որոնց միջոցով խոլերան ահռելի չափերով տարածվել էր քաղաքում և զարհուրելի կոտորած անում։ Ես առաջարկում էի փակել այդ առուները։ Կարդալուս միջոցին Արծրունին զայրոյթի բացականչութիւն էր արձակում։ Յետոյ նստեց և 5 րոպէից յետոյ մի ուժեղ առաջնորդող գրեց։ Նոյնպէս վրդովված և զայրացած յարձակվեց մի շարլատանի վրա, որը ինչ-որ «կալկան» բոյսով խոստանում էր խոլերա բժշկել՝ ի չարը գործ դնելով ժողովրդի հաւատը, և որի դէմ ես խիստ բողոքում էի իմ յօդուածում։

Մի ուրիշ անգամ Գրիգորը անխնայ կերպով նշաւակեց մի բժշկի, որը, նրա կարծիքով, մի նոր, դեռ չը ստուգված բուժական միջոց գործ էր ածում հիւանդների վրա...

Այսպէս, նոյնիսկ սոսկ գիտական հարցերում Գրիգորը հանդէս էր գալիս իբրև մարակող հրապարակախօս։ Եւ մենք երջանիկ էինք, երբ նա իր ուժեղ գրչով ընդգծում ու մեկնում էր հասարակական առողջապահութեան վերաբերեալ մեր տուած խորհուրդները և արած դիտողութիւնները, որովհետև, ճիշդ որ, մեր յայտնած գիտական դիտումները և տուած խորհուրդները նրա գրչի տակ հրահանգների և պատգամների ոյժ էին ստանում։

Չարհամարհել մասնագէտ աշխատակցի յայտնած մտքերը, այլ յարգանքով վերաբերվել դէպի նրանց և օգտվել նրանցով քարոզչութեան համար,—ահա Գրիգոր Արծրունու արժանիքներից մէկը, որից զուրկ են շատ խմբագիրներ։

Հիմնադրի մահից յետոյ, «Մշակը» շարունակեց պահպանել նոյն դիրքը դէպի գիտութիւնը ժողովրդականացնելու գործը, և ես չեմ յիշում, որ իմ աւելի քան 25 տարւայ աշխատակցութեան ժամանակամիջոցին գրած գիտական-առողջապահիկ յօդուածներիս մէջ գէթ մի տող փոփոխված կամ ջնջված լինէր։

Ընդհակառակ, երբ ես ծուլանում էի գրելու, խմբագրութիւնը յիշեցնում էր ինձ իմ պարտքը և նոյնիսկ գրելու նիւթ էր տալիս։

Փառք ու պատիւ «Մշակին», որը միշտ լայնօրէն բացել է իր էջերը ժողովրդի մէջ առողջական գիտելիքներ տարածելու համար։ Գիտական առողջապահիկ տեղեկութիւնները տասնեակ տարիների ընթացքում կաթիլ-կաթիլ ընկել են ժողովրդի գիտակցութեան վրա և մի քիչ շարժել են նրան դէպի նոր, ժամանակին համեմատ կենցաղ։

Բժշկ. Վահան Արծրունի

Պեատիգօրսկ

«ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ

(40-ամեակի առթիւ)

II*)

Մենք անցեալ անգամ տուինք մի համառօտ տեղեկութիւն «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարի մասին, ընդգծելով նրա ընդարձակ հասարակական գործունէութեան միայն մի մասը, թողնելով ապագային աւելի բազմակողմանի գնահատութիւնը։

Այսօր կանգ կառնենք «Մշակի» խմբագրական կազմի միւս անդամների բնորոշման վրա։

«Մշակի» ղեկավարներից մէկն է Յովհ. Տէր-Մարկոսեան, որին ճանաչելու համար այստեղ մենք առաջ ենք բերում Լէօի խօսքերը։ «Յովհաննէս Տէր-Մարկոսեանը,—գրում է Լէօն իր «Գրիգոր Արծրունի» աշխատութեան մէջ **),—1877 թւից մինչև այսօր անփոփոխ անձնատուր եղած է «Մշակին»։ Լրագրական գործի մէջ ամենքը յայտնի չեն դառնում հասարակութեան իրանց անուններով։ Այստեղ կայ և վարագոյրի ետևում համեստ, անանուն աշխատողը, որ սակայն պակաս երախտաւոր չէ իր տոկուն, անընդհատ, զրկանքներով ու դժուարութիւններով լի գործունէութեամբ։ Յովհ. Տէր-Մարկոսեանը «Մշակի» այդպիսի երախտաւոր աշխատողներից առաջինն է։ Արծրունին սկզբից և եթ մի առանձին սիրով կապվեց այդ երիտասարդի հետ և մինչև մահը դա էր նրա ամենամօտիկ բարեկամը, որի հետ երկար տարիների ընթացքում բաժանել էր թէ տաժանակիր աշխատանք, թէ ուրախութիւն և թէ վիշտ։ Մեծանալով «Մշակի» խմբագրութեան մէջ, սնվելով Արծրունու գաղափարներով և շարունակ վայելելով նրա մտերիմ բարեկամութիւնը, Տէր-Մարկոսեանը այսօր էլ «Մշակի» տրադիցիաների հաւատարիմ աւանդապահն է, նրա գաղափարների անխոնջ պաշտպանը։ «Մշակը» ունեցել է շատ դժուար ժամանակներ, երբ նա չէր կարողանում նիւթապէս ապահովել իր աշխատակիցներին. Տէր-Մարկոսեանը միշտ ծառայել է նրան անշահասիրութեամբ, երբէք հարց չը դարձնելով նիւթականը։ Հայոց խմբագրութիւններից ոչ մէկը չէ տեսել նրա պէս մի մարդ, որ ամբողջ քառորդ դար ծառայէր լրագրին անձնամոռաց հաւատարմութեամբ»։

Խօսելով նոյն աշխատութեան մէջ «Մշակի» ղեկավարների մասին, Լէօն շարունակում է. «Այդպիսի մարդիկ էին Արծրունու նեցուկները։ Վարձատրութիւնը չէր, որ կապում էր ընդունակ աշխատաւորներին լրագրի հետ. կար աւելի մեծ, աւելի հաստատուն կապը՝ գաղափարը։ Այս կողմից Արծրունին ամենաերջանիկն էր հայ խմբագիրների մէջ» և այլն և այլն։

Տպագրական անջնջելի խօսքերով այսպիսի նպաստաւոր վկայական տալուց յետոյ՝ չը գիտեմ ինչ հետևողական տրամաբանական հիմունքների վրա Լէօն թոյլ է տալիս խաւար «Հորիզոնի» մռայլ էջերում անվայել զրպարտութիւններ յերիւրելու այդ իր համարած «անձնամոռաց», «հաւատարիմ», «երախտաւոր», «անշահասէր» և «ընդունակ» աշխատաւորների հասցէին։ Եթէ Լէօն գրում է, որ «Մշակը» ունեցել է շատ դժուար ժամանակներ, երբ նա չէր կարողանում նիւթապէս ապահովել իր աշխատակիցներին, ապա ինչո՞ւ, այդ զգալով հանդերձ, մի այդպիսի տառապագին ժամանակաշրջանում իսկ՝ հէնց ինքը տողավարձի աւելացնելու հարց բարձրացրեց, հաստատուն կապի՝ գաղափարի հանդէպ մատի փաթաթան շինեց կոպէկապաշտական կուլտը, խայտառակ աղմուկներ հանելով, որ միայն վրդովել կարող էր Գր. Արծրունու գերեզմանական նինջը... Աշխատակիցների կողմից Լէօն Արծրունուն ամենաերջանիկն է համարում հայ խմբագիրների մէջ, բայց եթէ մեծ հրապարակախօսը գերեզմանից յանկարծ գլուխը բարձրացնելիս լինէր ու տեսնէր Լէօի նման երկերեսանի, գաղափարապաշտ գրիչներին, թէ ինչպէս քափ ու ճարինչի մէջ աշխատում են իր հիմնադրած «Մշակը» տապալել, արդեօք ինչ պատասխան կը տայրն Արծրունին, ինչ երեսով կը կանգնէին նրա և ապագայ պատմութեան անաչառ դատավճռի առաջ։

«Տեղը եկաւ՝ հայ է նա, տեղը եկաւ՝ այլազգի»... Այդ նշանաբանին հետևող գրիչները նախանձելի չեն, ընթերցող։

III

«Մշակի» անդրանիկ թղթակիցներից մէկն է Հ. Առաքելեանը,—գրում է Լէօն.—նա միակն է կենդանի մնացածներից, որ այսօր էլ շարունակում է գրել «Մշակի» մէջ, 30 (այժմ 40. Գ. Բ.) տարվայ ընթացքում հաւատարիմ մնալով նրա դրօշակին»։

Այս տողերը գրված են «Գրիգոր Արծրունի» երկրորդ հատորում 1903 թ.։ Անցել է դրանից մօտ 10 տարի, ուրեմն Հ. Առաքելեանի գրական գործունէութիւնը, որ սկսվում է 1872 թ. «Մշակի» № 15 իր իր՝ Թաւրիզից գրած առաջին թղթակցութեամբ, 40 տարվայ շրջանն է անցնում, և այդքան երկար ու ձիգ տարիների ընթացքում՝ նա, որպէս գլխաւոր և բարեխիղճ աշխատակիցներից մէկը, եղել է «Մշակի» դաւանանքների հաւատարիմ աւանդապահը, Գրիգոր Արծրունու մտերիմ բարեկամը, նրա գաղափարների անխոնջ պաշտպանը։

Եւ այդպէս շարունակ Առաքելեանը ծառայել է այդ լրագրին նոյն անդաւաճան ոգով և ուղղութեամբ, նոյն անշահախնդիր և անձնուրաց հաւատարմութեամբ։

Առաքելեանին վիճակվեց Ալ. Քալանթարի և Յովհ. Տէր Մարկոսեանի հետ թև թևի տուած՝ առաջ տանել «Մշակի» ղեկը։ Պայքարը սկսվեց ահագին թափով։ Հակառակորդները լցրին մամուլի էջերը բառաբանները հարստահարող հայհոյանքների կոյտերով, մի բան, որ հասարակութիւնը վաղուց էր զգվել այդ տեսակ գրականութիւնից։ Բայց մտքի դաւաճանները չէին դադարում իրանց ոլաքները, խայթոցները ուղղելու Առաքելեանի դէմ՝ աշխատելով նրան տապալել, վարկաբեկել հասարակութեան առաջ և ստիպել հեռանալու գրական ասպարէզից։ Միջոցների մէջ խտրութիւն չէին դնում և ինչ առասպելներ, յերիւրանքներ ասէք՝ հնարեցին նրա մասին։

Բայց Առաքելեանը յամառ հողիներից է. նա չը վհատվեց։

Ժրաջան մեղուի նման, գլուխը կախ, «Մշակի խմբագրատանը նստած, գիշեր-ցերեկ անդադար շարժում է գրիչ յանուն «Մշակի» գաղափարների, յանուն ժողովրդական շահերի։

Նա շօշափում է լուրջ հասարակական խնդիրներ, քաղաքագիտական հարցեր, գրում է բանասիրական և մատենախօսական յօդուածներ, իսկ վերջին տարիներում տալիս է նոյն «Մշակում» առաջնորդողներ։ «Մտքեր և փաստեր» ուշագրաւ յօդուածների շարքը՝ Շահրիար ստորագրութեամբ՝ Հ. Առաքելեանի գրչին են պատկանում։ «Մշակի» «Մամուլ» բաժինը կազմողը ներկայումս գլխաւորապէս Հ. Առաքելեանն է։

Այս բազմարդիւն գրական վաստակաւորի կեանքը և գրական գործունէութիւնը, անշուշտ, հետաքրքրութիւն պիտի պատճառեն ընթերցողներին։

⁂

Հ. Առաքելեանը ծնվել է 1855 թ. մայիս ամսին Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Ութ տարեկան հասակից ծնողները տալիս են նրան այնտեղի կուսանաց վանքը, ուր ուսուցչուհիներից նա սովորում է կարդալ-գրել։ 1865-ին տեղափոխվում է Թաւրիզ, երկու տարի ուսանում է այնտեղ, յետոյ տնային ուսուցիչների մօտ պարապում է։ 1874-ին կրկին գնում է ծննդավայրը և պատրաստվելով՝ 1877-ին ընդունվում է Բագուի րէալական դպրոցի 5-րդ դասարանում։ 1879-ին աւարտում է և մտնում Մոսկվայի Պետրովսկո-Ռազումովսկի ակադեմիան, բայց հանգամանքների զօրութեամբ, գլխաւորաբար հօր վախճանվելու պատճառով, ստիպված է լինում 1881 թւին վերադառնալ Շուշի, ուր Գէորգ Դ. կաթողիկոսի կոնդակով թեմական և օրիորդաց դպրոցների տեսուչ է նշանակվում։ Այդ պաշտօնը նա վարում է մի տարի ձրիաբար։ 1882-ին մասնակցել է Թիֆլիսում տեղի ունեցած հայոց ուսուցչական առաջին և վերջին ժողովներին։ 1884, 1885 և 1892 թւականներին նա եղել է կաթողիկոսական ընտրութիւնների ներկայ՝ իբրև աշխարհական պատգամաւոր Պարսկաստանի և Հնդկաստանի թեմերի։ Ամենաջերմ մասնակցութիւն է ունեցել վերջին կաթողիկոսական խորհրդակցական և ընտրական ժողովներին։ Նա ջերմ պաշտպան էր հանդիսացել Խրիմեանի և Իզմիրլեանի ընտրութեան։ 1881 թ. Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Շուշու ճիւղը բացվել է շնորհիւ Հ. Առաքելեանի եռանդուն ջանքերի. այդտեղ մի քանի տարի նա վարել է նախագահի և քարտուղարի պաշտօնները։ Եղել է և քարտուղարի պաշտօնակատար Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. Թիֆլիսի գրասենեակում 1892—1897 թւերին։ Գաբրիէլ Միրզոյեանի և Նատալիա Տէր-Մարկոսեանի հետ 1880 թւին հիմնել է Թիֆլիսի Հայոց Հրատարակչ. Ընկ. կազմը և վեց տարի եղել է խմբագրական մասնաժողովի անդամ։ 1900 թ. Պարսկաստանի կենտր. կրթական յանձնաժողովի անդամ է ընտրվել։ Նա մասնակցել է միջազգային արևելագէտների գիտական ժողովներին Եւրոպայում, ուր օտարազգի ականաւոր խաղաղասէրների ուշադրութիւնը գրաւելով յարուցանում և պաշտպանում է հայկական հարցը։

Գործունէութեան ամենալայն շրջանը նա կենտրոնացրել է «Մշակում», որի խմբագիրներից և հրատարակիչներից մէկն է ներկայումս և այդտեղ փորձված գրագէտ-հրապարակախօսի տպաւորութիւն է գործում իր բազմաթիւ գրուածքներով։

Տարիներից ի վեր Հ. Առաքելեանը կազմում է գրական մի հսկայական աշխատանք՝ «Հանրագիտական բառարան»։ Նրա խմբագրութեամբ լոյս է տեսնում «Արօր» ամսագիրը համակրելի ուղղութեամբ։ Իբրև վիպագրող՝ Առաքելեանը յայտնի է «Շահրիար» ծածկանունով։ Վիպական գործերից ուշադրութեան արժանի է «Ջհուդ-Բուշան» վէպը, որ հետաքրքրական և աջող նկարագրութիւն է պարսկական կեանքից։

«Առաքելեանի գրիչը,—գրում է Ատրուշանը Կ. Պոլսի «Շիրակ» շաբաթաթերթում,—շարժած է իր ազգին յառաջդիմութեան մեծ յեղաշրջումին համար։ Ժողովուրդը ի նկատի առած, անոր կրթութեան համար կազմակերպած է իր ինքնագիր և թարգմանածոյ հրատարակութիւնները։ Գրական հոգեբանութիւնը վերլուծելով, կը գտնենք Առաքելեանի նշանաբանը՝ ժողովրդասիրութիւն, աշխոյժ կարկառուն ձեռք, խեղճ մարդկութեան վրայ գուրգուրացող սիրտ։ Հռետորական համոզիչ լեզու, միտքն ընտանի՝ միջազգային, ընկերական և պատմական գիտութեան, Արծրունիի անմոռաց գաղափարականով զրահաւորուած այս բազմավաստակ գործիչը դեռ հեռու է իր ասպարէզը վերջացուցած ըլլալէ»։

Ճիշդ է նկատում Ատրուշանը. այդ ժողովրդասիրական ոգին, խեղճ մարդկութեան վրա այդ անկեղծ, գուրգուրացող սրտի զգացումները մենք տեսնում ենք աւելի գեղեցկագիտութեամբ ընդգծված «Տասն և երկու պատմուածքների» մէջ, որոնցից մի քանիսը արտատպվել են Թիւրքահայոց թերթերում և մի քանիսն էլ թարգմանվել ռուսերէն։ Այդ պատմուածքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ դաշտերի վրա փռված ամբրոսական ծաղիկներ, որոնք իրանց խնկանոտ բուրմունքների շնորհիւ գրաւել գիտեն անցորդներին և թարմացնել նրանց նրբազգաց ճաշակը։ Հ. Առաքելեան-Շահրիարը այդ պատմուածքներով, իսկապէս շնորհալի և տաղանդաւոր վիպագրի յատկութիւններով օժտված, մի նոր հումանիստ ուղղութիւն է մտցնում մեզանում, պաշտպան կանգնելով տանջվող մարդկութեանը։

Այդ իսկական ժուռնալիստ-հրապարակախօսը կազմում է «Մշակի» անդրանիկ ոյժերից մէկը ու, ինչպէս «Շիրակն» է ասում, «հաւատարիմ հետևողը անոր ազգասիրական լուսամիտ աւանդութիւններուն, որոնք բնական է թէ իրենց վրայ պիտի հրաւիրէին օտար անժամանակ վարդապետութեանց մոլեռանդներուն և մեր ամեն կարգի խուժանավարներուն թշնամութիւնը։ Ասիկա արգելք չէ սակայն, ընդհակառակը, որ կովկասահայ հրապարակագրութեան մէջ իրեն ընծայուի արժանիքի դափնի՝ երիցութեան իրաւունքին հետ»։

Հ. Առաքելեանը լրագրական պայքարների մէջ քաջամարտիկ զինւորի նման կուրծքը դէմ է տուել ոլաքներին, անվախ առաջ անցել, ձեռքում պինդ բռնած ունենալով գաղափարի ծածանող դրօշակը։ Ահա մի մարդ, գաղափարի մարդ, քառասուն երկար ու ձիգ տարիներ հաւատարիմ «Մշակի» դրօշակին՝ բաց ճակատով կարող է հայ հասարակութեան առաջ կանգնել և պարծանքով ասել, որ ինքը որոշ գոյնի մարդ է, համոզված հասարակական գործիչ, գրական համեստ զինւոր, որ դաւանած գաղափարի սիրոյ և նրա յաղթանակի համար պատրաստ է իր ամբողջ կեանքը զոհելու։

IV

«Մշակի» խմբագրութեան շուրջը Թիֆլիսում, իբրև մօտ աշխատակիցներ կամ խմբագրական աշխատաւորներ գործում են՝ Ա. Եզեկեան, Ս. Մալխասեան, Յ. Սպէնդիարեան, Ա. Մխիթարեան, Ս. Եսայեան, Արամ Նազարէթեան, Սուրխաթեան, Լևոն Դանիէլեան, Ա. Շխեան, Յ. Գասպարեան, Ա. Դաւթեան։ «Մշակի» խմբագրութեան գրասենեակի կառավարչական մասը վարում է և աշխատակցում է Ք. Թումեան։ Սրբագրական ծանր պաշտօնը վարում է և աշխատակցում է Վ. Հայկազն։

«Մշակի» աշխատակիցների թիւը շատ մեծ է և գրել նրանց մասին՝ դա կը նշանակէ գրել մեր գրականութեան պատմութիւնը։ Դա մի պատկառելի թեմա է, որով արժէ զբաղվել բնորոշելով այն մեծ աւազանի նշանակութիւնը, որտեղ մկրտվել են լուսագոյն խոհերի և զգացումների արտայայտող մեր գրողները։ Եւ նշանակելի է, որ որքան մարդիկ հեռացել են այդ աւազանի ներշնչումներից, այնքան նրանք թաղել են իրանց գրիչը. իսկ նրանք, որոնք մնացել են հաւատարիմ, վաստակել են մաքուր և ազնիւ գործողների պանծալի անուն։

Գր. Բալասանեան

«ՄՇԱԿԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

I

Թէև «Մշակի» առաջին համարների յօդուածները դեռ ևս մի քանի ամիս առաջ էին տպարանին յանձնվել, և վաղուց ցենզորին էր տարել, որովհետև պէտք է իբր մի նմուշ 1871 թ. դեկտեմբերի սկիզբներին լոյս տեսնէր, բայց «Մշակ» վերնագրի սև տառերի պատրաստ չը լինելու և այն ժամանակվայ ցենզուրային խիստ կանոնների պատճառով, առաջին համարը լոյս տեսաւ 1871 թ. դեկտեմբերի 31-ին։

Այդ ժամանակ, եթէ չեմ սխալվում, ցենզօրը՝ Թիֆլիսին մի ժամանակ յայտնի Աւագ խանի որդի Սողոմոն Մելիք-Մեհրաբեանն էր։

Տպարանը, որտեղ առաջին անգամ «Մշակը» լոյս տեսաւ, նախկին Դուբիլէէրի տպարանն էր, որի տէրն էր, կարծեմ, Ծերեթէլին։

Այդ տպարանը գտնվում էր հէնց այն փողոցում, որտեղ այժմ գտնվում է «Մշակի» խմբագրութիւնը, այսինքն Սերգիևսկայա փողոցի վրա՝ այժմեան Միրզոյեանների տանը։

Առաջին անգամ, որ տպվեց համարը, կրում էր հետևեալ վերնագիրը՝

«Մշակ» № 1. 1 յունվարի 1872 թ.։

Որքան յիշում եմ «Մշակի» առաջին համարները կազմված էին լինում հետևեալ դասաւորութեամբ։ Առաջնորդողները, ներքին տեսութեան մեծ մասը, արտաքին տեսութիւնը ամբողջովին և խառն լուրերը Գ. Արծրունին ինքն էր պատրաստում, գրում։ Ֆելիէտօնը՝ Զաքուլը (դերասան Միրզաս Ամերիկեան), Համմալը (Գ. Սունդուկեան), վերջը Նեօբէն (ինքը Արծրունին)։ Բանասիրական մասը՝ Գէորգ Ջմշկեանը։ Մատենագրականը՝ Ստ. Պալասանեանը։

Այդ ժամանակ յաճախում էր խմբագրատուն և Պ. Իզմայիլեանը, որը Պարիզից վերադառնալով օգնում էր ոչ միայն նոր նիւթեր ու յօդուածներ ռուսերէն գրելով, որը Արծրունին հայերէն էր թարգմանում, այլ և այնքան սիրում էր տպագրական գործը, որ մինչև անգամ շարուածք էլ էր անում։ Եւ այժմ հէնց լաւ յիշում եմ, որ նա իր «Արևի վրա էլ բծեր կան» վերնագրով ռուսերէն լեզուով գրած յօդուածը, իմ օգնութեամբ հայերէն թարգմանած, տուեց Արծրունուն, որը ուղղելով հետևեալ համարներից մէկում տպագրեց։

Արտաքին տեսութեան տեղեկութիւնները, որ Արծրունին էր թարգմանում եւրոպական լրագրներից, ոչ միայն այդ ժամանակվայ տեղական լրագրական կեանքում նորութիւն էին, այլ և շատ սիրով ու հետաքրքրութեամբ կարդացվում էին. այդ լուրերը նաև հայոց մասին էին տեղեկութիւն տալիս։

«Մշակը» իր դիրքով, տեսքով, տառերի՝ իրանց յարմար տեղերում շարված դասաւորութեամբ և հարուստ յօդուածներով ոչ միայն աւելի աչքի էր ընկնում մինչև այդ ժամանակ հրատարակված պարբերական թերթերից, այլ և նրա նոր լոյս տեսած առաջին համարները ձեռք էին բերում նաև վրացիք, ռուսները և այլազգիները, որպէսզի թարգմանել տալով տեղեկանան, թէ ինչ են ասում լոյս տեսած յօդուածները։ Այսպէս՝ գեներալ Կվեսակովսկիի որդին «Մշակի» լոյս տեսած երկու համարները Ալադաթեանի խանութում գնելով՝ գրավաճառանոցի կառավարչին խնդրեց թարգմանել մի քանի յօդուածներ։ Եւ այդպէս յաճախ, երբ հետաքրքրական յօդուածներ էին լինում, օտարները ձեռք էին բերում լրագրի համարները։

— Ոչ միայն դիրքն ու տեսքն է լաւ, այլ և տառերն էլ գեղեցիկ են,—ասում էին ռուսները։

«Մշակի» յօդուածներով հետաքրքրվում էր ոչ միայն ժողովրդի հասարակ դասը, այլ և բարձր դասակարգը, որովհետև Արծրունին դեռ ևս մանկութիւնից իր գեներալ հօր զինուորական պաշտօնակից ընկերների հետ շփվել էր, և շատ անգամ ինքս ականատես եմ եղել, թէ ինչպէս նա, դեռ ևս «Մշակում» մի որևէ յօդուած լոյս չը տեսած, պատմում էր իր այս-ինչ յօդուածի լոյս տեսնելու մասին և այդ առիթով երկար դատում և վիճաբանում էր։

Արծրունին ուրիշ ոչ մի պաշտօն չունենալով՝ միայն իր լրագրին էր նուիրված։ Իսկ Պետ. Սիմէօնեանը ոչ միայն բեռնաւորված էր դասերով կամ տեսչի պաշտօնակատարութեամբ Ներսիսեան դպրոցում, այլ և բարձր դասակարգի հետ համարեա ոչինչ շփումն չէր ունենում։

Բացի դրանից՝ Շամախու երկրաշարժի մասին տպված լուրերը այդ տարվայ համարներում՝ «Մշակ» լրագրի անունը ամենքին յայտնի դարձրին։

Ահա թէ ինչու համար «Մշակը» հէնց իր լոյս տեսնելու օրից մի պատկառելի դիրք ստեղծեց իր համար և այդքան մեծ ազդեցութիւն ունեցաւ։

«Մշակի» առաջին համարի տպված օրինակները խմբագրատանը ծալելով—այդ ժամանակ հէնց Արծրունին էլ օգնում էր ինձ ծալելու գործին—անմիջապէս փոքր եղբօրս տուի և նախօրօք նրան ցոյց տուած հասցէներով բաժանորդներին հասցրի. իսկ ինքս մի 30 օրինակ վերցրի և վազեցի այնպիսի տեղեր, ուր եղբօրս չէի վստահում, որպէսզի չը սխալվի կամ չը մոռանայ։

Առաջին համարը հէնց տարայ Գր. Արծրունու հօրը, Երեմիա Արծրունուն, որը իր այգու պավիլիօնում նստած՝ լրագիրը ձեռքից վայր գցեց և «Մշակը» վերցնելով՝ ուրախ ժպիտով հարցրեց.

— Արդէն լոյս տեսա՞ւ։

— Այո,—ասացի։

— Գրիգորը տանն է։

— Ոչ, գնաց տպարան,—ասացի ու գլուխ տալով յետ դարձայ և վազեցի առաջնորդարան՝ Մակար արքեպիսկոպոսին տալու, իսկ այնտեղից Ներսիսեան, Գայեանեան և Մարիամեան դպրոցները, ապա Իվանովի և արքունական ընթերցարանը, «Կաւկազի», «Հայկական Աշխարհի», «Մեղուի» ու «Դրօյքայի» խմբագրատները, Էնֆիաճեանի և Ալադաթեանի գրավաճառանոցները և այլ նշանաւոր տեղեր։ Առաջին համարները հատով չէինք վաճառում, որպէսզի տարեկան բաժանորդագրութիւնը աւելանայ։

Թէ որքան էր այն ժամանակ «Մշակի» դաւառական բաժանորդների թիւը, այժմս բոլորովին չեմ յիշում, բայց այսքանը լաւ եմ յիշում, որ Թիֆլիսի բաժանորդների թիւը 217 ի էր հասնում առաջին օրերը, իսկ Թիֆլիսից դուրս աւելի մեծ թիւ «Մշակ» ստացողներից էին Բագուի և Օրդուբաթի բաժանորդները։

Մակ. Ջմշկեան

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄՇԱԿԸ

Մանուկ հասակից ես սիրել եմ լրագրութիւնը։ Առաջին լրագիրը, որ հետաքրքրել է ինձ և սէր է զարթեցրել իմ մէջ դէպի ընթերցանութիւնն ու գիտութիւնը, դա «Մշակն» է եղել։

Իմ առաջին ծանօթութիւնը «Մշակի» հետ եղել է 1894—95 թ.։ Այդ ժամանակ ես 10 տարեկան մանուկ էի և դեռ նոր էի գիւղից ոտք դրել քաղաք։

«Մշակ»... Որքան ընտանի էր այդ բառն իմ սրտի համար, ինչքան հասարակ անուն, որքան պարզ հասկացողութիւն էր պարունակում նա իր մէջ։

Հին-Նախիջևանի գաւառի գիւղերում «մշակ» անուանում են այն անձանց—գլխաւորապէս պատանիներ—որոնք որոշ ժամանակամիջոցով վարձվում են գիւղացիների մօտ աշխատանքներ կատարելու։

1894—95 թւի 22 տարեկան «Մշակը» այժմ դարձել է 40 տարեկան՝ կեանքի կուռ բովից անցած, կեանքի գիտութեամբ և փորձով հարստացած, պատկառելի հասակաւոր մշակ։

40 տարի է, ինչ նա հասարակութեան և ժողովրդի մշակ դարձած, լուսաւորութեան և քաղաքակրթութեան արօրի մաճը ձեռքն առած՝ հայ կեանքի վերածնութեան նոր ուղիներ է փորում, ակօսում։ 40 տարի է, ինչ նա հերկում, մշակում է հայի մտաւոր խոպան անդաստանը, սերմանում է նրա մէջ եւրոպական քաղաքակրթութեան և գիտութեան բեղմնաւոր սերմեր։ 40 տարի է, ինչ նա հաւատարիմ մշակին յատուկ խնամքով և հոգատարութեամբ քաղհանում է իր մշակելի անդաստանը, արմատախիլ անելով նրա միջից որոմներն ու զանազան տեսակ վնասակար խոտաբոյսերը։ Այդ երկար տարիների ընթացքում նա եղել է և մնացել է նոյն ճշմարտասէր և արդարադատ մշակը, անաչառ և աներկիւղ քննադատը, անխնայ խարազանողն ու մերկացնողը։

Եւ իր պարտքը ամենայն բարեխղճութեամբ կատարողի կատարեալ գիտակցութեամբ՝ այսօր կանգնած է մեր առաջ հասարակութեան ազնիւ, հաւատարիմ, վաստակաւոր մշակը՝ գլուխը բարձր բռնած, ճակատը բաց, երեսը պարզ։

Եւ հայ հասարակութեան սրբազան պարտքն է ամենայն արժանաւորութեամբ պսակել իր հաւատարիմ և վաստակաւոր «Մշակի» 40-ամեայ քրտնաջան մշակութիւնը, ընդմիշտ ապահովելով նրա գոյութիւնը։

Կեցցէ ճշմարտասէր և վաստակաւոր «Մշակը»։

Կեցցեն նրա օգնական ընկեր-մշակները։

Ենովք Նազարեան

Շէլաևօ (Ենիսէյի նահ.)

---

*) Տես «Մշակի» յաւելուած № 9.

**) Տես 499—501 էջ։